



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



# ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ



ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ

ԱՄԱՍԻԱ

ԼԵՆՈՒՂԻ



## ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԱՐՄԱՎԻՐ, ՄԱՐՏ -2014

*Այս վերլուծությունն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:*

## Վերլուծություն իրականացնող կառույցը

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ  
GGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

*Արմավիրի մարզի Սարդարապատ, Բամբակաշատ, Լենուդի և Ամասիա համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի փետրվար ամսին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում:*

*Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելություններն ու ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:*

*Գործընթացն իր մեջ ներառում է հետևյալ փուլերը.*

- ⇒ *PACA գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի հավաքագրում:*
- ⇒ *Համայնքների տնտեսական քարտեզագրում. առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում:*
- ⇒ *Առկա արժեշրթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում:*
- ⇒ *Աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար:*
- ⇒ *Արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում:*
- ⇒ *Նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում:*
- ⇒ *Ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում համայնքների ակտիվ դերակատարներին:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

.....	1
Վերլուծություն իրականացնող կառույցը.....	1
Համայնքների հակիրճ նկարագրություն .....	4
Համայնքների մրցակցային առավելությունները. ....	5
Տնտեսության հիմնական ճյուղերը .....	6
Պտղաբուծություն.....	6
Խաղողագործություն .....	12
«Այգեգործություն – պտղի շարունակական վերամշակում» արժեշղթան համայնքներում ....	13
Այգեգործության արժեշղթայի առանձին փուլերի նկարագիր և զարգացման նախաձեռնություններ .....	14
.....	14
Դաշտավարություն.....	16
Արևածաղիկ .....	17
Զարգացման նախաձեռնություններ դաշտավարության արժեշղթայում .....	18
Հողագործության ճյուղում ոլորտների համեմատություն և մրցունակության վերլուծություն	19
Ջերմոցային տնտեսություններ .....	20
Զրի արտադրություն.....	22
Սառնարանային տնտեսություններ .....	24
Անասնապահություն .....	25
Կանանց ներգրավվածությունը արժեշղթաներում .....	26
Դուրս բերված նախաձեռնությունների և առաջարկությունների ամփոփում.....	27

## Համայնքների հակիրճ նկարագրություն

Սարդարապատ, Բամբակաշատ, Ամասիա և Լենուղի համայնքները գտնվում են Արմավիրի մարզում, Արմավիր քաղաքից 5-10 կմ դեպի հարավ-արևմուտք: Գյուղերը տեղադրված են Միջինարաքսյան գոգավորությունում՝ ծովի մակարդակից 860-890մ բարձրության վրա:

Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կեսին, ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր: Այստեղ մարդիկ հիմնականում զբաղվում են հողագործությամբ, անասնապահությամբ, վարում են ջերմոցային և սառնարանային տնտեսություններ: Գյուղերի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել են Արևմտյան Հայաստանի Վանի, Բայազետի, Արճեշի, Ալաշկերտի շրջաններից և Պարսկահայաստանի Արծափի գավառից՝ 1828-1830 թվականներից:

Բնակչության 52%-ը կազմում են տղամարդիկ, 48 %-ը՝ կանայք:

### Համայնքների վիճակագրական տվյալները.

	Սարդարապատ	Բամբակաշատ	Ամասիա	Լենուղի
Բնակչություն	6300	3950	1193	1770
Տնտեսություններ	1300	1232	341	383
Վարելահողեր	750 հա	450 հա	135 հա	137 հա
Բազմամյա տնկարկներ	425 հա	244 հա	150 հա	260 հա
Կոմբայններ	4	2	7	-
Տրակտորներ	50	11	28	12
Բեռնատարներ	40	15	8	8

## Համայնքների մրցակցային առավելությունները.

- ⇒ Գործարար հասկանիշներով աչքի ընկնող բնակչություն:
- ⇒ Շուկայում հայտնի “Հոկտեմբերի բադրջան” բրենդով սմբուկը:
- ⇒ Նպաստավոր բնակլիմայական պայմաններ այգեգործության համար:
- ⇒ Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում, հարուստ է արտեզյան ջրերով:
- ⇒ Տարիների փորձով և գիտելիքով հարուստ հողագործներ:
- ⇒ Սարդարապատ հուշահամալիրի առկայություն:



## Տնտեսության հիմնական ճյուղերը

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտե՞ղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտե՞ղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի և անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Սարդարապատ, Բամբակաշատ, Ամասիա և Լենուղի համայնքներում տնտեսության հիմնական ճյուղերն են հողագործությունը, ջերմոցային տնտեսությունները, մասամբ էլ՝ անասնապահությունը:

Հողագործության մեջ զբաղվում են առավելապես խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուստանային մշակաբույսերի և տեխնիկական մշակաբույսերի, մասնավորապես՝ արևածաղկի աճեցմամբ:

## Պտղաբուծություն

Պտղաբուծությամբ Սարդարապատ, Բամբակաշատ, Ամասիա և Լենուղի համայնքներում զբաղվում է բնակչության մոտ 60 %-ը: Աճեցնում են հիմնականում դեղձ, սալոր, ծիրան, փոքր ծավալներով՝ նաև կեռաս, խնձոր: Պտղատու այգիների առկայությամբ ամենաշատը աչքի է ընկնում Լենուղի համայնքը՝ մոտ 170 հեկտարով:

Մրգերի տեսակներն ու այգիների ծավալներն՝ ըստ համայնքների

Պտուղների տեսակները	Սարդարապատ	Բամբակաշատ	Ամասիա	Լենուղի	Բերքատվությունը մեկ հեկտարից
Ծիրան (հա)	65	15	31	46.6	25-30 տ
Դեղձ (հա)	20	5	5	104	20-25 տ
Սալոր (հա)	40	20	17	5	15-20 տ
Խնձոր (հա)	-	-	15	10	20 տ
Կեռաս (հա)	-	4	20	2	15 տ

**Այգեգործության ոլորտի վերլուծությունը՝ Պորտերի աղամանը գործիքով**

Առաջատար պտղագործների ներքին հատկությունները	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բազմամյա փորձ	Նոր տեխնոլոգիաների կիրառման բացակայություն (հիմնականում ավանդական մեթոդներ):
Համագործակցության առկայություն	Ընդհանուր ռազմավարության բացակայություն
Առողջ մրցակցություն	

Արտադրական գործոնների որակ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>• Բերրի հողեր</li> <li>• Լիարժեք ոռոգովի հողեր</li> <li>• Նպաստավոր բնակլիմայական պայմաններ</li> <li>• Հակակարկտակայանների առկայություն մշակվող հողերի 70%-ի համար</li> <li>• Պետության աջակցությամբ սուբսիդավորվող վառելանյութի և պարարտանյութերի տրամադրում</li> <li>• Հասանելի վարկային ռեսուրսներ</li> <li>• Մասնագիտական վերապատրաստման դասընթացներ ԳԱՄԿ-ի նախաձեռնությամբ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ոռոգման ջրատարները բետոնապատված չեն, տեղի է ունենում ջրի մեծ կորուստ:</li> <li>• Հակակարկտակայանների բացակայություն Սարդարապատ և Լենուլի համայնքներում</li> <li>• Ժամանակակից տեխնոլոգիաների ուսուցման բացակայություն</li> <li>• Վարկային միջոցների տոկոսադրույքները հիմնականում շատ բարձր են:</li> </ul>

Պահանջարկի որակ
<ul style="list-style-type: none"> <li>• Դեղձի, ծիրանի և սև սալորի հանդեպ առկա է կայուն և աճող պահանջարկ:</li> <li>• Շուկայում գինը թելադրում են գնորդները:</li> <li>• Բարձր որակ-բարձր գնի պահանջարկ է վայելում ծիրանի և դեղձի բերքի միայն 5%-ը, 60%-ը բարձր որակ-միջին գին, 35 %-ը միջին ցածր որակ-ցածր գին:</li> </ul>

Հարակից ճյուղերի որակ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>• Բավարար մեքենատրակտորային պարկի առկայություն</li> <li>• Փայտյա արկղերի արտադրություն</li> <li>• Արտահանող ընկերությունների առկայություն</li> <li>• Վերամշակող ընկերությունների (չրանոցների) առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բուժանյութերի անորոշ և աներաշխիք ծագում, հաճախ՝ անորակ</li> <li>• Լաբորատոր ծառայությունների բացակայություն</li> <li>• Մթերման կետերի սակավություն</li> </ul>

*Վերլուծության մեկնաբանությունը ներկայացված է ստորև*

### **Առաջատար պտղագործների գործունեությունը**

Պտղագործներն այս գյուղերում ունեն երկար տարիների փորձ: Համագործակցում են ընդհանուր խնդիրների, բերքի իրացման, քիմիկատների ձեռքբերման շուրջ: Մրցակցային դաշտն առողջ է:

Հիմնականում չեն կիրառում ժամանակակից տեխնոլոգիաներ, կաթիլային համակարգեր և այլն: Չունեն նաև ոլորտի զարգացման ընդհանուր ռազմավարություն:

### **Արտադրական գործունեների որակը**

Համայնքներն ունեն նպաստավոր բնակլիմայական պայմաններ և բերրի հողեր՝ արդյունավետ այգեգործության համար:

Հողերը գտնվում են լիարժեք ոռոգման գոտում, սակայն ջրատարները, որոնց միջոցով ջուրը հասնում է այգիներին, բետոնապատ չեն, և մինչև ջուրը կհասնի այգետերերին, տեղի է ունենում ջրի մեծ քանակի և ժամանակի կորուստ: Լենուղի համայնքում գործում են գլխավոր ջրատարից բաժանվող նմանատիպ մի քանի ջրատարներ:

Միայն Ամասիա համայնքն է պաշտպանված կարկուտի վտանգից, մնացած երեք համայնքներում էլ առկա է հակակարկտակայանների տեղադրման խնդիր:

Այգիների ընդլայնման և զարնանային աշխատանքների կազմակերպման համար գյուղացիները կարողանում են ձեռք բերել ֆինանսական միջոցներ վարկերի տեսքով, սակայն տոկոսադրույքները հիմնականում շատ բարձր են և ոչ մատչելի:

Մասնագիտական զագացման և ոլորտի նորամուծությունների ուղղությամբ չեն իրականացվում վերապատրաստման դասընթացներ:

### **Օժանդակող ճյուղերի որակը**

Գյուղերն ապահովված են պտղատու այգիների մշակման համար անհրաժեշտ գյուղտեխնիկայի քանակով: Հիմնականում տեխնիկան մաշված է ու հին, սակայն աշխատանքների կազմակերպմանը բավականացնում է:



Սարդարապատ և Բամբակաշատ համայնքներում արտադրվում են փայտյա արկղեր մրգերի տարայավորման համար: Գործում են չիր արտադրող 5 ընկերություններ:

Ամբողջ գոտու համար չկա այգեգործության սպասարկման և խորհրդատվական որևէ կենտրոն: Գյուղացիներն հիմնականում դեղորայքը ձեռք են բերում անհայտ ծագումով և առանց որակի երաշխիքի, ինչը հաճախ արդյունք չի տալիս և հանգեցնում է այգիների բուժման միջոցառումների կրկնակի իրականացման և լրացուցիչ ծախսերի աճի:

### **Պահանջարկի որակ**

Արմավիրի մարզի այս 4 համայնքներում պտղի հասունացումը համընկնում է երկրում ծիրանի և դեղձի հասունացման միջանկյալ ժամանակահատվածի հետ, երբ այս մրգերի մշակմամբ զբաղվող բոլոր գոտիներում արդեն առկա է հասած բերքի մեծ քանակ, և շուկայում միջին գներ են սահմանված: Միայն առաջին բերքն է (որը ամբողջ բերքի մոտ 5%-ն է) վաճառվում բարձր գնով՝ մոտ 400 դրամ: Մնացած բերքի 55 %-ը արտահանող ընկերությունները մթերում են 150-300 դրամով, իսկ 40 %-ն էլ վերամշակող ընկերությունների կողմից մթերվում է միջինը 50 դրամով: Շատ հաճախ 50 դրամով վաճառվող պտուղը հողագործները չեն էլ հավաքում այգիներից, որովհետև վաճառքից ստացված գումարները չեն փակում բերքահավաքի ծախսերը:

**Մշակվող պտղի այգիների ծավալների բաշխվածքն ըստ տնտեսությունների**

Տնտեսությունների դասակարգումը	Այգիների չափերը	Տնտեսությունների բաշխվածքը
Խոշոր	5 հա և ավելի	5%
Միջին	1-5 հա	25%
Փոքր	0,3 -1 հա	70%

Այգիների մշակման համար 1 հեկտարի վրա հողագործները ծախսում են միջինը 800 հազար դրամ: Շահույթը 1 հեկտար ծիրանի այգու մշակումից կազմում է միջինը 4 մլն դրամ, դեղձի մշակումից՝ 2,5 մլն դրամ և սալորի այգուց՝ 1,8 մլն դրամ:

**Նորայր Կոստանյանը տասնամյակների փորձը փոխանցել է սերնդե սերունդ**

62-ամյա Նորայր Կոստանյանը բնակվում է Արմավիրի մարզի Լենուղի գյուղում: Գյուղի ամենախոշոր գյուղատնտեսներից մեկն է: Նա մշակում է 15 հեկտար հող, ունի 6 կով, հորթ ու ցուլ, 120-ից ավելի խոզ և գոճի, հավեր, այլ ընտանի թռչուններ: Նա նաև ունի գյուղատնտեսական տեխնիկա,



որով մշակում է ոչ միայն իր հողերը, այլև օգնում է համագյուղացիներին: 3 որդիներից երկուսն ապրում են նրա հետ:

Խորհրդային տարիներին Կոստանյանն աշխատել է գյուղի սովխոզում, եղել է բրիգադիր, այնուհետև՝ սառնարանային տնտեսության պահեստապետ:

Անկախացումից հետո սեփականաշնորհել է մի քանի հեկտար հող և սկսել զբաղվել հողագործությամբ և այգեգործությամբ: Ունի նաև սառնարանային տնտեսություն: Իր հաջողությունների հիմնական գրավականն է համարում այն, որ իր ընտանիքն իր կողքին է: «Գյուղացու համար, երբ իր ընտանիքն իր հետ է և օգնում է, դրանից ավելի հաջողություն չի կարող լինել», - շեշտում է Կոստանյանը: Այգիներում աճեցնում է ծիրան, դեղձ, սերկևիլ, խնձոր, սալոր, տանձ, նուռ, թուրթ, փշատ, ընկույզ, խաղող: 2013 թ. միայն խաղողից ստացել է 20 տոննա բերք: «Խաղողի ճուրջ կար, որ 3 կգ էր կշռում», - հպարտությամբ նշում է գյուղատնտեսը:

Իրեն որևէ մեկից առավել չի դասում, ասում է, որ այն ամենն, ինչ ունի, հասել է միայն աշխատասիրության և ընտանիքի աջակցության շնորհիվ: «Ճիշտ եմ կազմակերպել ամեն ինչը, երեխաներին ճիշտ ուղու վրա եմ դրել ու հասել եմ էդ ամեն ինչին», - ասում է լենուղցի գործարար-գյուղատնտեսը: Իրեն «ապահովագրել» է բոլոր կողմերից: «Եթե կարկուտը վնասի բերքը, կապրենք անասունների հաշվին», - ասում է Կոստանյանը:

Հայկական գյուղերի համար ամենացավալի հարցերից մեկը դարձել է արտագաղթը: Գյուղի բնակիչները չեն կարողանում մշակել հողը, եկամուտ ստանալ, ուստի երիտասարդների զգալի մասը բռնում է արտագաղթի ճանապարհը: Նորայր Կոստանյանի ընտանիքին դա չի սպառնում: Փորձառու գյուղատնտեսն այնպես է դասավորել իր կյանքը, որ որդիները նույնիսկ ժամանակ չունեն մտածելու արտագաղթելու մասին: «Ես ինձանից անկախ էնպես արեցի, որ իմ տղաները չեն կարողանա թողնեն գնան: Ուրեմն 20-25 տարվա մեր ամբողջ աշխատանքը պիտի ջուրը լցվի», - շեշտում է Կոստանյանը:

Գյուղի զարգացման համար, ըստ Նորայր Կոստանյանի, անհրաժեշտ է ենթակառուցվածքների բարելավում և համայնքային նշանակության կառույցների հիմնում:


## Խաղողագործություն

Տնտեսությունների 60%-ը ներգրավված են խաղողագործության մեջ: Մշակում են մոտ 700 հա կարմրահյութ, ռկածեթելի, կանգուն, մեղրաբույր և գառան դմակ տեսակի խաղող: Սարդարապատում մշակում են 300 հա, Բամբակաշատում՝ 200հա, Ամասիայում՝ 112 հա, Լենուղիում՝ 93 հա: Խաղողագործությունն այստեղ երկար տարիների պատմություն ունի: Նշված տեսակներից գերակշիռ մասը կազմում են ռկածեթելի և կանգուն տեսակի խաղողի այգիները: 1 հեկտարի բերքատվությունը 25 տոննա է: Սեզոնին գյուղացիները խաղողը հանձնում են Լենուղի համայնքում տեղակայված «ՄԱՊ» ՓԲԸ-ին և Ամասիայում տեղակայված Երևանի կոնյակի, գինու, օղու գործարանին՝ 145 դրամով: Վերջին տարիներին խաղողագործները տարեսկզբին պայմանագրեր են կնքում գործարանների հետ մթերվող բերքի քանակի և գնի շուրջ, ուստի իրացման խնդիրներ գրեթե չկան:

Թունաքիմիկատների հարցում խաղողագործները, համագործակցելով մթերող ընկերությունների հետ, նախապես ստանում են որակյալ դեղորայք, իսկ գումարը վճարում են բերքի մթերման ժամանակ:

Պայմանավորված տեխնիկական սորտերի հեշտ իրացմամբ՝ սեղանի խաղողի մշակումը շատ քիչ մաս է կազմում: Սակայն սառնարանային տնտեսությունների առկայության դեպքում սեղանի խաղողը հնարավոր կլինի վաճառել տևական ժամանակ և բարձր շուկայական գներով, ուստի սեղանի խաղողի այգիների ընդլայնումը համարվում է արդյունավետ և հեռանկարային:

«Այգեգործություն – պտղի շարունակական վերամշակում» արժեզրթան համայնքներում



## Այգեգործության արժեշտային առանձին փուլերի նկարագիր և զարգացման նախաձեռնություններ

1



**Պտղի աճեցում, տեսակավորում, այգիների ընդլայնում**

Այգեգործության առաջին փուլը մրգերի աճեցումն է: Ստորև ներկայացված են օղակներում առկա թույլ կետերը և զարգացման հնարավոր միջամտությունները:

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Ջրի մեծ քանակի կորուստ, ոռոգման ժամանակատար գործընթաց:	Ոռոգման ջրատարների բետոնապատում (կիսախողովակներ)	Ջրատարների վերանորոգում:
Եղանակային բարդ պայմաններին անպատրաստվածություն:	Հակակարկտակայանների տեղադրում	Համայնքներում հակակարկտակայանների տեղադրման աջակցություն, որոնք թույլ կտան ընդհանուր առմամբ պաշտպանել մոտ 200-600 հա այգիներ:
Որակյալ նյութերի, տնկիների, քիմիկատների, պարտանյութերի ձեռքբերման դժվարություն:	Ենթաշրջանի համար այգեգործական ռեսուրս-կենտրոնի հիմնում	Այգեգործական ռեսուրս-կենտրոնի ստեղծում, որը
Աճեցման գործընթացի խթանման ժամանակակից միջոցների վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքի պակաս:		<ul style="list-style-type: none"> <li>կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն,</li> <li>կվաճառի երաշխավորված բուժանյութեր, պարարտանյութեր, սերմեր և գործիքներ,</li> <li>կմատակարարի նոր և արդյունավետ տնկիներ:</li> </ul>
Որակյալ գյուղ. ծառայությունների բացակայություն:		<p><i>Այս նախաձեռնությունը վերաբերում է նաև դաշտավարության բանջարեղևածառային մշակաբույսերի ոլորտի զարգացմանը:</i></p>

## 2

### Պտղի վերամշակում, փաթեթավորում

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Պտղի վերամշակող արտադրամասեր գրեթե չկան, ինչի արդյունքում համայնքների ներսում հավելյալ արժեքի ստեղծում տեղի չի ունենում:	Չորանոցների հիմնում	Չորանոցներ գործում են միայն Սարդարապատում, անհրաժեշտություն կա նոր չորանոցների հիմնման, ինչպես նաև գործող չորանոցի տեխնիկական և տեխնոլոգիական հզորացման աջակցության:
	Հավաքման կայանի հիմնում	
	Սառնարանային փոքր և մեծ տնտեսությունների հիմնում:	Մատչելի Ֆինանսական և տեխնոլոգիական աջակցության տրամադրում՝ նոր և ժամանակակից սառնարանային տնտեսությունների կառուցման համար:
	Տարայավորման, մշակման, մուրաբաների և ջեմերի փոքր արտադրամասեր	Ֆինանսական և տեխնոլոգիական աջակցություն մրգերի վերամշակման փոքր արտադրամասերի ստեղծման համար:

## 3

### Իրացում

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Համայնքներում կան մարդիկ, ովքեր ցանկանում են ինքնուրույն կազմակերպել մրգերի արտահանումը, սակայն չունեն բավարար հնարավորություններ և պայմաններ:	Սառեցնող ավտոմեքենաների ձեռքբերման աջակցություն	Սառեցնող մեքենաների առկայությունը թույլ կտա համայնքների բնակիչներին բերքի մի մասը վաճառել ինչպես ՀՀ այլ մարզերում, այնպես էլ մտածել արտահանման ուղղությամբ:

## Դաշտավարություն

### Բանջար-բոստանային մշակաբույսեր

Բանջար-բոստանային մշակաբույսերից ամենաշատը մշակում են Սարդարապատ համայնքում, սակայն բոլոր համայնքներն էլ մշակում են լոլիկ, սմբուկ, վարունգ, տաքդեղ, սոխ, ձմերուկ:

Բանջար-բոստանային մշակաբույսերի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ.

	Սարդարապատ	Բամբակաշատ	Ամասիա	Լենուղի	Միջին բերքատվություն
Լոլիկ	180 հա	80 հա	15 հա	30 հա	50 տ
Վարունգ	40	20	3	10	30 տ
Սմբուկ	80	10	-	11	35 տ
Տաքդեղ	40	5	-	-	35 տ
Ձմերուկ/սեխ	30	10	10	45	50 տ

Ներկա պահին բերքատվության վերոնշյալ ցուցանիշները հնարավոր առավել բերքատվության մոտ 70%-ն են կազմում՝ պայմանավորված բուժանյութերի հաճախակի անորակ լինելու գործոնով, ինչի արդյունքում հարկ է լինում երկրորդ-երրորդ բուժում անել, բերքատվության անկում է տեղի ունենում:

Այս մշակաբույսերն Արմավիրի մարզում աճող ամենաարդյունավետ տեսակներն են: 1 հեկտարի բանջարի մշակության համար ծախսվում է 1,5 մլն դրամ՝ ներառյալ իրացման համար կատարվող ծախսերը (մոտ 300 հազարը ծախսվում է բեռնափոխադրումների վրա): Շուրջ 900 հազար դրամ կազմում են ձմերուկի մշակման ծախսերը:

Բանջարեղենի հիմնական մասը վաճառում են Երևանի և մարզերի շուկաներում, իսկ լոլիկի մոտ 30%-ը հանձնում են պահածոների գործարանին՝ 35 դրամով:



## Արևածաղիկ

Արևածաղիկի մեծ քանակի մշակությամբ աչքի է ընկնում Ամասիա համայնքը: Ընդհանուր առմամբ մշակում են 300 հա, որից 15 հա-ը՝ համայնքի հողերում, մնացածը՝ հարևան (Բաղրամյան, Նալբանդյան, Գետաշեն) համայնքներից վարձակալած վարելահողերում: Արևածաղիկի մշակության մեջ ներգրավված է համայնքի բնակչության մոտ 70 %-ը: Բերքատվությունը 1 հեկտարից կազմում է 2-3 տոննա: 1 հեկտար արևածաղիկ մշակելու համար հողագործները ծախսում են 350-500 հազար դրամ: Խոշոր մշակողները, ովքեր մշակում են 5-30 հեկտար արևածաղիկ, 1 հեկտարի համար ծախսում են 350 հազար դրամ, իսկ միջին և փոքր տարածքներ մշակողները՝ 500 000 դրամ:

Աշնանը, բերքահավաքից հետո, արևածաղիկի հիմնական պաշարը վաճառում են Երևանի մեծածախ կետերին, կիլոգրամը՝ 500-700 դրամով: Համայնքի ներսում որևէ վերամշակում կամ փաթեթավորում տեղի չի ունենում:

1 հեկտար արևածաղիկ մշակելուց միջին հաշվով ստացվում է 1մլն դրամ շահույթ:

### *Ուժեղ կողմեր*

Հողագործներն արդեն բավականին մասնագիտացած են այս ոլորտում, հետևում են պարտադիր ցանքաշրջանառությանը, պարբերաբար իրականացնում են արևածաղիկ սերմերի թարմացում, յուրաքանչյուր տարվա բերքահավաքից հետ բույսի ավելորդ մասերը (ցողուն, տերևներ...) մանրացնում և վերադարձնում են հողին՝ ապահովելով բնական սնունդ հաջորդ տարվա համար: Հագեցած են պահանջվող գյուղտեխնիկայով և կոմբայներով: Համայնքն ունի 7 կոմբայն՝ նախատեսված, բացի արևածաղիկից, նաև այլ մշակաբույսերի հավաքման համար:

### *Թույլ կողմեր*

Արևածաղկի բերքահավաքից հետո անհրաժեշտ է բերքի չորացում և գոտում/տեսակավորում: Համայնքում չկան չորանոցներ, և մարդիկ ստիպված ամբողջ բերքը փռում են ճանապարհներին ու մայթերին, մինչև չորանա, իսկ եթե եղանակային պայմաններն էլ բարենպաստ չեն լինում, ապա նույն գործողությունը հարկ է լինում կրկնել մի քանի անգամ, ինչն էլ ազդում է բերքի որակի վրա և լրացուցիչ ժամանակ խլում: Համայնքում կան 2 փոքր գոտարաններ՝ շատ թույլ հզորությամբ, որոնց ծառայությունից օգտվելու համար մարդիկ ամիսներով հերթագրվում են, մինչև բերքը գտեն և հանձնեն ընդունման կետերին:

### **Զարգացման նախաձեռնություններ դաշտավարության արժեշղթայում**

<b>Թույլ կետեր</b>	<b>Հնարավոր միջամտություններ</b>	<b>Գործողություններ, առաջարկություններ</b>
<b>Բանջարեղենի մթերումը վերամշակող ընկերություններն իրականացնում են բավական ցածր գներով:</b>	Վերամշակման կազմակերպում	Համայնքների ներսում բանջարեղենի չորացման արտադրամասերի հիմնում, կիսաֆաբրիկատների և պահածոների արտադրության կազմակերպում:
<b>Արևածաղկի չորացումը կազմակերպվում է բացօդյա եղանակով, ոչ հիգենիկ պայմաններում:</b>	Չորացման կազմակերպում	Արևածաղկի չորանոցների, գոտարանների և բովարանների հիմնում:
<b>Մատակարարվում է անորակ դեղորայք:</b>	Պահանջվող որակի և համապատասխան դեղորայքի մատակարարում	Գյուղատնտեսական սպասարկման կենտրոնի հիմնում:

**Հողագործության ճյուղում ոլորտների համեմատություն և մրցունակության վերլուծություն**

Ոլորտ	Արտադրողականություն*	1 հա-ից ստացվող շահույթ
Խաղողագործություն	30 000 դրամ	2 000 000 դրամ
Ծիրան	40 000 դրամ	4 000 000 դրամ
Սալոր	25 000 դրամ	1 800 000 դրամ
Դեղձ	25 000 դրամ	2 500 000 դրամ
Զմերուկ	33 000 դրամ	2 000 000 դրամ
Լոլիկ	25 000 դրամ	2 500 000 դրամ
Արևածաղիկ	20 000 դրամ	1 000 000 դրամ

\* Արտադրողականությունը մեկ օրում մեկ մարդու կողմից ստեղծվող հավելյալ արժեքն է:

Հողագործության մեջ տեղ գրաված ոլորտներն ամբողջությամբ հիմնված են համայնքների մրցակցային առավելությունների վրա և մրցունակ են երկրի այլ տարածաշրջանների հետ համեմատած: Սակայն վերլուծության մեջ, արդեն նկարագրված թույլ կողմերով և վերամշակող օղակների սակավությամբ պայմանավորված, ճյուղն առավելագույն արդյունք ներկա պահին չի ապահովում: Դուրս բերված նախաձեռնությունների իրականացումը կբերի ոլորտների շահութաբերության մինչև 30% բարձրացմանը և համայնքների ներսում հավելյալ արժեք ստեղծելուն, ինչպես նաև նոր աշխատատեղերի ապահովմանը:

## Ջերմոցային տնտեսություններ

Ջերմոցային տնտեսությունների հիմնական մասը կենտրոնացած են Բամբակաշատ համայնքում: Գործում են մոտ 40 փոքր և միջին չափերի ջերմոցներ: Մշակում են վարունգ, լոլիկ, մասամբ էլ՝ ծաղիկներ: Գործում է նաև բավական հաջողված, տարիների ընթացքում կայացած սածիլներ մշակող տնտեսություն, որը, բացի Բամբակաշատից, ապահովում է նաև հարևան 5-6 համայնքների ջերմոցային տնտեսությունների պահանջարկը:

Առաջատար մի քանի տնտեսություններում առկա են կաթիլային համակարգեր, որոնք բացի ջրի և ծախսերի խնայողությունից, տնտեսավարողների համոզմամբ, ևս մի կարևոր ազդեցություն են ունենում: Կաթիլային համակարգի առկայության դեպքում հողի վրա ջրային շերտ չի կուտակվում, ինչի արդյունքում ջերմոցի ներսում գոլորշիացման գործընթաց տեղի չի ունենում, հետևաբար բույսերի տերևները զերծ են մնում բազմաթիվ հիվանդություններով վարակումից:

Ջերմոցային տնտեսությունները գործում են մարտից մինչև դեկտեմբեր: Ջեռուցման բարձր ծախսերի պատճառով դեկտեմբեր-փետրվար ամիսներին գործունեությունը դադարեցվում է:

Ժամանակակից ջերմոցային նոր տնտեսությունների հիմնումը կնպաստի համայնքներում տնտեսությունների եկամտի աճին, քանի որ բոլոր նպաստավոր պայմաններն առկա են դրանց զարգացման և արդյունավետ գործարկման համար:

### Մեջբերումներ Ղևոնդ Մկրտչյանի գործունեությունից

*2003-2004 թթ. անցումը վճռորոշ եղավ Բամբակաշատ համայնքի բնակիչ Մկրտչյանների ընտանիքի համար: Այդ տարվա ցրտահարությունից տուժել էր բերքը: Նրանք չէին հասցրել թաղել խաղողի վազերը: Մնացած բերքն էլ սառնարանում էր մնացել, քանի որ Վրաստանում տեղի ունեցած Վարդերի հեղափոխությունից հետո վրացի վերավաճառողները չէին եկել խաղող գնելու: «Որոշեցինք՝ մի բան անենք, որ կատարած ծախսերը հանենք: Ցրտահարված հողերը քանդեցինք, սարքեցինք ջերմոց»,- հիշում է Ղևոնդ Մկրտչյանը:*



38-ամյա ջերմոցատերը սկսել է իր գյուղի և շրջակայքի 7 համայնքների համար նոր արտադրանք ստանալ: Այդ ժամանակ,- ասում է նա,- թաղարները նորություն էին, գրեթե անէջնող չկար: Առաջին ջերմոցում ստացել է առաջին թաղարները: Մակայն սածիլների որակը չի բավարարել: «Գնալով՝ սերմերի որակն ընկավ, վաճառողներն սկսեցին խաբել: Մենք էլ որոշեցինք էլ չօգտվել տեղական արտադրողներից», - փաստում է Մկրտչյանը: Արդեն երկրորդ տարին է՝ ինչ նա սերմերը ձեռք է բերում ԱՄՆ-ից: Վաճառողին գտել է համացանցով:

Իր բիզնեսի հաջողության գրավականներից մեկը Ղևոնդը համարում է տեխնոլոգիական արդյունավետ լուծումները, որոնց շնորհիվ նա խնայում է ջերմոցի համար ծախսվող էներգիան, կառուցում է էներգոարդյունավետ ջերմոցներ և կաթսաներ: Ղևոնդ Մկրտչյանը Հայկական ատոմային էլեկտրակայանի ռեակտորի կառավարման առաջատար ինժեներներից մեկն է: Ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

Հիմա Ղևոնդի արտադրանքի հանդեպ պահանջարկը 2,5 անգամ ավելի է, քան ինքը կարողանում է առաջարկել: Մակայն երիտասարդ ինժեները չի ցանկանում որակի հաշվին բավարարել պահանջարկի ամբողջ ծավալը: Ուստի, ըստ նրա, հաջողության մյուս գրավականն ազնվությունն է: Ղևոնդի համար, իր իսկ բնորոշմամբ, լավագույն գովազդը իր հաճախորդներն են: Յուրաքանչյուրն իր հետ բերում է ևս մեկ-երկու նոր հաճախորդ:

Ղևոնդն ունի նաև նոր նախագծեր: Ցանկանում է հիմնել կիսաֆարրիկատ պահածոների արտադրություն: Դրա համար անհրաժեշտ է սառնարան: Նա նաև պատրաստվում է հիմնել սառնարանը, որպեսզի կարողանա պահեստավորել արտադրանքը: «Մենք փորձնական պատրաստեցինք այդ կիսաֆարրիկատները: Պահեցինք փոքր սառցարանում: 1 լիտրանոց տարաներով էինք փակել, անմիջապես սպառվեց, մարդիկ հիմա ամեն օր դրա մասին են հարցնում, ես էլ չեմ ցանկանում կորցնել հաճախորդներին, խոստանում եմ, որ շուտով կլինի», - ասում է Մկրտչյանը:

Բամբակաշատ գյուղի պոլիէթիլենային առաջին ջերմոցի հիմնողն է եղել: Հիմա սակայն, ջերմոցատերերի թիվն ավելացել է: «Գյուղացին է՞րբ է ջերմոց դնում. երբ բերքն է փչանում: Կա նաև միմյանց նայելու ու «վարակվելու» գործոնը», - ասում է Ղևոնդը:

## Չրի արտադրություն

4 համայնքներում էլ կա ավանդական տնային չրագործություն: Իսկ մասնագիտացված արտադրություն իրականացվում է միայն Մարդարապատ համայնքում: Այստեղ գործում են 5 կայացած չորանոցներ, որոնք չիր են արտադրում և՛ սեփական այգիներից, և՛ մթերված մրգերից: Ընկերություններն արտադրում են տարեկան 5-20 տոննա չիր, որի զգալի մասն արտահանում են ՌԴ, մնացածն էլ վաճառում Հայաստանի շուկաներում՝ վերավաճառողների միջնորդությամբ:

### Սամվել Սուքիասյանի ճանապարհը չրագործության ոլորտում

*Սամվել Սուքիասյանն ունի էլեկտրոնային տեխնիկայի ինժեների մասնագիտություն: 1975-1992 թթ. աշխատել է «Քիմավտոմատիկա» գիտաարտադրական միավորումում: Սուքիասյանը մասնակցել է այնպիսի սարքերի պատրաստմանը, որոնք որոշում էին կինո և ֆոտո ժապավենների վրայի արծաթի շերտը: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո, շատերի նման, փորձառու ինժեները ևս սկսել է եկամտի նոր աղբյուրի փնտրտուքը:*



*2002 թ. ընկերոջ խորհրդով Մարդարապատ գյուղում ձեռք է բերել հողատարածք և այնտեղ հիմնել է չորանոց: Արևային չորանոցը կառուցել է իր ձեռքերով: Առաջին տարվա ընթացքում արտադրել է ծիրանի և սալորի չիր: Իրեն համարում է ինքնուս չրագործ: Սակայն փորձված չրագործներից և Մարդարապատում գտնվող չիր արտադրող ընկերությունից խորհուրդներ հարցնելուց չի խորշել: «Սակայն ամենաշատը սովորեցի սեփական սխալներից», - ասում է Սուքիասյանը:*

*Առաջին տարվա ընթացքում Սամվել Սուքիասյանն արտադրել է 2 տոննա չիր: 2013թ. նրա արտադրանքը եղել է 20 տոննայից ավելի: 14 տոննան արտահանել է Ռուսաստան: Դեռևս սեփական բրենդը չունի, սակայն դրա մշակման աշխատանքը սկսել է: Անցած 12 տարիների ընթացքում արտադրության ծավալի տասնապատկումը չրագործը պայմանավորում է գործի մեջ անընդհատ կատարվող ներդրումներով և նորամուծություններով: Նա 2002-2013 թթ. ընթացքում կառուցել է երկու նոր չորանոց: «Ես հասկացա, որ ամենամեծ խնդիրներից մեկը մթերումն ու պահեստավորումն է: Պտուղների այն սորտերը, որոնք պիտանի էին չրագործության համար, շատ քիչ էին և ցրված ամբողջ երկրով մեկ: Ես էլ որոշեցի իմ*

շահույթի հաշվին հիմնել այգիներ»,- ասում է գիտնական-չրագործը: Նա անցած տարի Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շնորհիվ ձեռք է բերել երկու էլեկտրական չորանոց:

Այսօր Սուքիասյանն ունի 7 հեկտար այգի, որոնք այս տարվանից (2014 թ.) կսկսեն բերք տալ: Իր հաջողության գրավականը գործարարը համարում է սեփական հուսքի բազայի ստեղծումը և անընդհատ ու ուշիուշով որակյին հետևելը: Չրագործությունը, Սուքիասյանի բնորոշմամբ, «բարի բիզնես է»: «Երբ մենք նոր էինք սկսում, գյուղացիները չգիտեին, թե ինչպես և որտեղ իրացնեն սալորը, իսկ մենք սկսեցինք գնել նրանցից»,- ասում է նա: Այժմ չրագործը գյուղացիներին օժանդակում է՝ ավելի մրցակցային գնով նրանցից գնելով բերքը: «Օրինակ՝ եթե պահածոյի գործարանները նրանցից լուրիկը գնում են 35 դրամով, մենք գնում ենք 70 դրամով»,- ասում է Սուքիասյանը:

Չրագործության ապագան և զարգացումը Սամվել Սուքիասյանը տեսնում է չրագործների միավորման մեջ: «Թուրքիան այսօր արտահանում է 1 միլիարդ դոլարի չիր: Եթե մենք էլ միավորվենք մեկ բրենդի, մեկ միավորման շուրջ, մենք էլ կկարողանանք նույն ծավալի արտահանել»,- վստահ է նա: Սակայն այդ քանակի արտադրելու համար անհրաժեշտ է մեխանիզացիա, իսկ մեզ մոտ,- ասում է գործարարը,- ձեռքի աշխատանքը դեռևս զերակշռում է: Մյուս կարևոր հանգամանքը սանիտարահիգիենիկ պայմանների բարելավումն է: Ըստ չրագործի՝ Հայաստանի ոչ բոլոր արտադրողներն են հետևում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմանը:

Սամվել Սուքիասյանը 2013 թ. մասնակցել է չրագործների համար Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կազմակերպած սեմինարներին: Հույս ունի, որ սկսված գործակցությունը զալիք ամիսներին կթևակոխի նոր փուլ: Սուքիասյանը ցանկանում է վարկ վերցնել՝ արտադրության ծավալն ավելացնելու նպատակով նոր սարքավորումներ ձեռք բերելու համար: Հատկապես՝ նա ցանկանում է զարգացնել սառնարանային տնտեսությունը: Այժմ նրա արտադրած չրերը սառնարանային պայմաններում կարելի է պահել մինչև 2 տարի: Չրագործի կարծիքով՝ հայկական չրի վերելքը սկսվել է մոտ 5 տարի առաջ: Այդ համբավն այժմ դինամիկորեն աճում է: Ըստ Սուքիասյանի՝ դրա հիմնական խթանը հայկական չրի համային հատկանիշներն են:

Եվրոպայում Սամվել Սուքիասյանն ունի հայ ծանոթներ, ովքեր զբաղվում են չրերի վաճառքով: «Եթե Հայաստանի արտադրողները կարողանան այնտեղ ուղարկել համապատասխան որակի չիր, նրանք ասում են, որ կիրառարվեն թուրքական արտադրանքից և կանցնեն մեր արտադրանքը ներմուծելուն»,- վստահեցնում է նա՝ մեջբերելով եվրոպացի հայերի խոսքը:

## Սառնարանային տնտեսություններ

Բոլոր համայնքներում միասին գործում են մոտ 15 սառնարանային տնտեսություններ: Սառնարանները հագեցած են խորհրդային ժամանակաշրջանից ժառանգած սարքավորումներով: Նոր տեխնոլոգիաներից օգտվելու փորձ գրեթե չկա: Սակայն առկա է տնտեսությունների ավելացման և ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցնելու միտում:

Արտահանման համար նախատեսվող ծիրանը հասունանում է ըստ տարածաշրջանի և համապատասխան կլիմայի, այսինքն՝ Արտաշատի գյուղերից սկիզբ է առնում վաղահաս ծիրանը և այդպես հաջորդաբար տարածվում է մինչև Արագածավան համայնք: Սարդարապատն ու շրջակա համայնքներն այս առումով ընկնում են միջին գոտում, այսինքն՝ ծիրանն այդ ժամանակահատվածում գերհագեցած է շուկայում, որը գնային անկման պատճառ է հաղիսանում: Այս հանգամանքով պայմանավորված սառնարանատերերին հնարավորություն է ընձեռնվում թե՛ զգալիորեն բարձրացնել արտահանվող ծիրանի գինը, թե՛ հանդիսանալ որպես հավաքակայան:

Բացի մրգերը, աշնան սեզոնին սեղանի խաղողի տեսակների պահպանման համար կրկին սառնարանների անհրաժեշտություն է առաջանում: Որոշակի խաղող մշակող համայնքներ, որտեղ սառնարանները բավական չեն, ստիպված են օգտվել հարակից համայնքների հնարավորություններից:

Մեծածավալ չրի արտադրության զարգացմանը զուգընթաց սառնարանային տնտեսության առկայությունը նույնպես դառնում է անհրաժեշտություն, որը նպաստում է չրի արտահանման համար շուկայի պահանջներին բավարարող տեսքի պահպանմանը:



## Անասնապահություն

Համայնքներում անասնապահությամբ զբաղվում են տնտեսությունների կեսից ավելին, սակայն հիմնականում՝ սեփական սպառման նպատակով: Մոտ 10 խոշոր տնտեսություն են, որոնք ունեն մեծ գլխաքանակ: Հիմնականում կովկասյան գորշ տեսակն է՝ խորհրդային ժամանակաշրջանից ժառանգված: 1 կովի տարեկան կաթնատվությունը 2000 լիտր է: Կաթը հանձնում են վերամշակող ընկերություններին: Չնայած որ տնտեսությունների մեծ մասը ներգրավված է անասնապահության մեջ, այնուամենայնիվ անասնապահությունը չի բխում համայնքների մրցակցային առավելություններից: Համայնքները չունեն արոտավայրեր և խոտհարքներ, ինչը բարձրացնում է խնամքի ծախսերը, և ոլորտը մրցունակ չի այլ անասնապահական շրջանների հետ համեմատած:

### Անասնագլխաքանակն ըստ համայնքների

	Սարդարապատ	Բամբակաշատ	Ամասիա	Լենուղի
Խոշոր եղջերավոր որից՝ Կովեր	1100	1000	571	330
Մանր եղջերավոր	416	700	140	90
	5000	200	400	-

## Կանանց ներգրավվածությունը արժեշղթաներում

### Հողագործություն

Կանայք այս համայնքներում ակտիվորեն ներգրավված են գյուղատնտեսական աշխատանքներում: Պտղագործության մեջ հիմնականում մասնակցում են պտուղների բերքահավաքի աշխատանքներին, մոտ 50 կին աշխատում են չրանոցներում՝ իրականացնելով լվացման, տեսակավորման, կեղեվագտման աշխատանքները:

Խաղողի աճեցման փուլերում մասնակցում է գրեթե կանանց 60%-ը: Էտման աշխատանքների 40%-ը կատարում են կանայք, չորկապի և թպատման ժամանակ աշխատանքի 90%-ը, և բերքահավաքի՝ 70%-ը:

Բանջար-բոստանային մշակաբույսերի աճեցման ընթացքում ցանքի, քաղհանի, բերքահավաքի աշխատանքների 80%-ն իրականացնում են կանայք, իսկ ջրելու և բուժման աշխատանքները միայն տղամարդիկ:

### Ջերմոցներ

Ջերմոցային տնտեսություններում նույնպես աշխատանքների հիմնական մասը կատարում են կանայք՝ բացառությամբ բուժանյութերի սրսկման գործընթացի:

### Անասնապահություն

Անասնապահության ոլորտում կթի, խնամքի և կաթնամթերքի վերամշակման 80% աշխատանքները տնտեսություններում իրականացնում են կանայք:

## Դուրս բերված նախաձեռնությունների և առաջարկությունների ամփոփում

### Այգեգործության արժեզրոյթ

- Ջրատարների վերանորոգում:
- Համայնքներում հակակարկտակայանների տեղադրման աջակցություն:
- Այգեգործական ռեսուրս-կենտրոնի ստեղծում:
- Չրանոցների հիմնում:
- Մրգերի և չրերի հավաքման կայանի հիմնում:
- Մատչելի ֆինանսական և տեխնոլոգիական աջակցության տրամադրում՝ նոր և ժամանակակից սառնարանային տնտեսությունների կառուցման համար:
- Մրգերի վերամշակման փոքր արտադրամասերի ստեղծում:
- Սառեցնող ավտոմեքենաների ձեռքբերում, մրգերի արտահանման կազմակերպում:

### Դաշտավարության արժեզրոյթ

- Համայնքների ներսում բանջարեղենի չորացման արտադրամասերի հիմնում, կիսաֆաբրիկատների և պահածոների արտադրության կազմակերպում:
- Արևածաղկի չորանոցների և զտարանների հիմնում:
- Ջերմոցային տնտեսությունների հիմնում և ընդլայնում, վերազինում ժամանակակից տեխնոլոգիաներով (կաթիլային համակարգեր, ջեռուցման արդյունավետ համակարգեր):

Շնորհակալություն ենք հայտնում Սարդարապատ, Լենուդի և Ամասիա համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամներին՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

